ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՐԱՆՑ ԵՎ ՍԱՐԻԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 02.05.2025Թ. N ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Իջևան

«31» ՀՈՒԼԻՍ 2025Թ.

«ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արտ Պլաս ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աննա Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 02.05.2025թ. թիվ **ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-2** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, և ՀՀ կառավարության 17.07.2025թ. թիվ 980-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով՝ Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Պայմանագրի N 1 հավելվածներով (2-րդ չափաբաժնի թիվ 1 Հավելվածով և 3-րդ չափաբաժնի թիվ 1 Հավելվածով) նախատեսված ծավալաթերթերի աշխատանքների յոթանասուն (70) տոկոսը՝ համաձայն Պայմանագրով նախատեսված 2-րդ և 3-րդ չափաբաժինների օրացուցային գրաֆիկներին համապատասխան, որոնց կատարման վերջնաժամկետը սահմանվում է 20.12.2025թ.:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված աշխատանքի ընդհանուր գինը կազմում է *178 080 000 (Մեկ հարյուր յոթանասունութ միլիոն ութսուն հազար)* ՀՀ դրամ, որից 2-րդ չափաբաժին՝ 75390000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժին՝ 102 690 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, որը կազմում է Պայմանագրի գնի յոթանասուն տոկոսը, որի վճարումն իրականացվելու է սույն համաձայնագրի թիվ 1 Հավելվածին՝ Վճարման ժամանակացույցին, համապատասխան: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված՝ 2 էջից, սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ	«Արտ Պլաս» ՍՊԸ
ք. Իջևան, Սահմանադրության 1	ՀՀ Արարատի մարզ,գ.Շահումյան
ՀՀ ՖԻՆ ԳՈՐՕ վարչություն	Արցախի5
07628257	Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԻ
900371002917	ՀՀ 220013333657000
	ՀԿՀՀ 04225743
	Տնօրեն՝ Ա. Սարգսյան
_____ Արման Գևորգյան	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
« »---------- 2025 թ. կնքված
ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-2-1 ծածկագրով համաձայնագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակ (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45221142 /502	Ընդհանուր շինարարական աշխատանքներ /Կիրանցի խմելու ջրագիծ	37695000	37695000	37695000	75390000	75390000	75390000	75390000
3	45221142 /503	Ընդհանուր շինարարական աշխատանքներ/ Սարիգյուղի խմելու ջրագիծ	51345000	51345000	51345000	102690000	102690000	102690000	102690000
Ընդամենը			89040000	89040000	89040000	178080000	178080000	178080000	178080000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
ք. Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն
07628257
900371002917

Արման Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արտ Պլաս» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ,գ.Շահումյան
Արցախի5
Բանկ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԻ
ՀՀ 220013333657000
ՀՎՀՀ 04225743
Տնօրեն՝ Ա. Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.